Վահագն ԱՖՅԱՆ

Ծնվել է 1978թ. փետրվարի 1-ին, Երևանում:

Կրթությունը՝

1984-1994թթ. - Երևանի Հակոբ Պարոնյանի անվան N59 միջնակարգ դպրոց,

1994-1999թթ. - Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի և թարգմանչի մասնագիտություն որակավորմամբ

2001-2004թթ. - Թեհրանի պետական համալսարանի Գրականության և հումանիտար գիտությունների ֆակուլտետի Պարսից լեզվի և գրականության ամբիոնի մագիստրատուրա և ասպիրանտուրա, բանասիրական գիտությունների թեկնածու

2018թ. - փետրվար-հուլիս ՆԱՏՕ-ի Պաշտպանական քոլեջի ավագ դասընթացներ:

Աշխատանքային գործունեությունը՝

2004-2006թթ. - ՀՀ ԱԳՆ ՄևՄԱ /Մերձավոր և Միջին Արևելքի/ երկրների վարչության Իրանի բաժնի փորձնակ, ռեֆերենտ, այնուհետև՝ կցորդ և երրորդ քարտուղար

2006-2009թթ. - Իրանում ՀՀ դեսպանության երրորդ քարտուղար

2009-2011թթ. - ՀՀ ԱԳՆ ՄևՄԱ երկրների վարչության Իրանի բաժնի երրորդ քարտուղար, այնուհետ՝ Սահմանակից երկրների վարչության Իրանի բաժնի երկրորդ քարտուղար, բաժնի վարիչ

2011-2015թթ. - Վրաստանում ՀՀ դեսպանության երկրորդ, այնուհետ՝ առաջին քարտուղար /գործերի ժամանակավոր հավատարմատար/

2015-2018թթ. - ՀՀ նախագահի աշխատակազմի Արտաքին կապերի վարչության խորհրդատու

2018-2021թթ. - Լեհաստանում ՀՀ դեսպանության առաջին քարտուղար, այնուհետև՝ խորհրդական /գործերի ժամանակավոր հավատարմատար/

2021թ. - հոկտեմբերից ՀՀ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության պետի պաշտոնակատար, այնուհետ՝ նույն վարչության պետ:

Օտար լեզուներ՝

Անգլերեն, ռուսերեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն և թուրքերեն:

Դիվանագիտական աստիճանը՝

Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Ընտանեկան կարգավիճակը՝

Ամուսնացած է, ունի որդի և դուստր:

2023 թվականի սեպտեմբերի 22-ի ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Նյու Դելի):